ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ· ՄԱՐԱՇԵՑԻ

(1100? – 1160?)

Գրիգոր Վարդապետ ծնած է ԺԱ· Դարու վերջերը հաւանաբար։ Եղած է Միրաքան Մարաշի մօտ գտնուող Ցեսուանց Վանքին։ Մանօթ էր իրրև գիտնական և ճգնաւոր։ Գրած է ընդհանրապէս կրօնական և հոգևոր նիւթերու շուրջ։ Իր գրուածքներէն կրնանք յիշել հետևեալները։

1· — Գիրք Վայից և Մեղայից· — Վայ քեզ անձն իմ, ընդէ՞ր ոչ սկսանիս տեսանել թէ ո՞րպէս պատրաստիս ...։ — Ձեռ· Երևանի, Թիւ 38, Թկ· 1760։ Ձեռ· Ս· Ց· Թիւ 1110, Թկ· 1363, էջ 969 – 1007 (ոչ լման)։ Ձեռ· Անկիւրիոյ· Թիւ 92, Թկ· 1584 – 97, Մկ (= 260) հատուած։

Գիրքը յօրինուած է 1149ին, պարզ և մաքուր ոճով։ Ասկէ առնուած զանազան հատուածներ կը գտնուին շատ մը ձեռագիրներու մէջ։

2· — Սկիզբն Խոստովանութեան ... ասացեալ մեղայիս· — Արի ի խոստովանութիւն ի գիշերի սկիզբն ի գլուխ պահոց քոց ...։ — Ձեռ· Ս· Ց· Թ· 1110, էջ 1008 – 1021։ Ձեռ· Անկիւրիոյ, Թ· 92, Ռ և Լ տուն։ Ձեռ· Երևանի, Թ· 108, Թկ· 1322, Թզ· 117բ – 178բ, Ռ և Լ տուն։

Կը թուի թէ Վայերը և Մեղաները միասին մէկ գիրք կազմած են նախապէս, և այդ պատճառով երկը կոչուած է Գիրք Վայից և Մեղայից։

3· — Գովասանութիւն առ Մարիամն Աստուածածին· — Ով ամենասրբուհի Աստուածածին, պարծանք կուսութեան ...։ — Ձեռ· Նոր Ջուղայի· Թիւ 430, Թկ· 1619 – 1631, Թզ· 191բ – 198ա։ Ձեռ· Երևանի, Թիւ 38, Թզ· 70ա – 71բ։

4· — Նորին Գրիգորի Ցեսուացու ասացեալ Աղօթք ...։ — Աստուած բարձրեալ, անհաւոր, անքննին, անիմանալի, անհասանելի, անճառելի, ինքնագոյ ...։ — Ձեռ· Նոր Ջուղայի, Թիւ 430, Թզ· 249ա 261բ։ Ձեռ· Երևանի, Թ· 38, Թզ· 71բ – 80ա։

5· — Աւրհնութիւն հինգշաբաթի ժամատուն աւրհնելոյ· — Աւրհնեալ է ամենասուրբ Երրորդութիւնն ի բարձունս, Հայր և Որդին և Հոգին Սուրբ ...։ — Ձեռ· Նոր Ջուղայի, Թիւ 430, Թզ· 261բ – 263բ։

6· — Աղօթք· — Տէր մեր Յիսուս Քրիստոս, Աստուած սքանչելագործ, հզօր և փառաւորեալ, անհասանելի, անիմանալի ...։ — Ձեռ· Նոր Ջուղայի, Թիւ 430, Թզ· 263բ – 265բ։

7· — Մաղթանք աւարտ բանի Վերափոխման Աստուածածնին· — Պաղատողդ առ քաղցրալուրն, միջնորդդ առ գթածն, մաղթողդ առ ընդունողն ...։ — Ձեռ· Նոր Ջուղայի, Թիւ 430, Թզ· 349բ – 351ա։

8· — Բանք գովեստից պատմագրաբար Յաղագս ծննդեան և անդնդեան և քաղաքավարութեան և վերափոխման ամենասրբուհոյ և փառաւորեալ միշտ կուսին Մարիամու Աստուածածնին· — Զլուսաւոր մարգարիտն, ըզքարն պատուական, ըզփարթամացուցիչ գանձն, զանկապուտ ճոխութիւնն ...։ — Ձեռ· Երևանի, Թիւ 38, Թզ· 41ա – 55ա։ Ձեռ· Նոր Ջուղայի, Թիւ 430, Թզ· 428բ – 456բ։

9· — Գովասանութիւն առ կոյսն Մարիամ Աստուածածին· — Բարեբանեալ ես ամենասրբուհի Աստուածածին, քանզի լոյսն առաջին և արարչական ...։ — Ձեռ· Նոր Ջուղայի, Թիւ 430, Թզ· 456բ – 472ա։ Ձեռ· Երևանի, Թիւ 38, Թզ· 55ա – 61բ։

Այս ցանկը կը համարինք առժամեայ· վասնզի կարելի է որ վերոգրեալներուն մէջ իրեն չպատկանող կտորներ մտած ըլլան, և կամ, աւելի հաւանականութեամբ, իր գրչէն ելած գործեր՝ անկէ դուրս մնացած։

Ն· ԱՐՔ· ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@